

ԽՈՎՄԱՍ ԹԵՐԶՅԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԻ ՔՆՆԱԳԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՐ

Ս. ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

Քովմաս Թերզյանը գրական այն սերնդի ներկայացուցիչներից է, որի հիմնադիրն ու առաջնորդը Լեզալ Ղևոնդ Ալիշանն էր։ Ստեղծագործական կյանքն սկսելով մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ նոր էր ձևավորվում հայ նոր բանաստեղծությունը, Պեշիկթաշլյանի, Դուրյանի, Խ. Գալֆայանի, Մ. Աճեմյանի և ուրիշների հետ Թերզյանն ինքն էլ կանգնած էր նրա ակունքների մոտ։ Մեծ է նրա ավանդը նաև ազգային ինքնությունը գրամատուցիկայի ստեղծման գործում։

Գրողի առաջին հաջողված երկի նկատմամբ անտարբեր շմանաց ժամանակի մամուլը։ «Սանդուխտ կույս» ողբերգության լույս տեսնելու առիթով (1862) «Կիլիկիա» կիսամյա հանդեսում տպագրվեց մի ծանուցում, որի մեջ ասվում էր. «Գեղեցիկ և սրտաշարժ ողբերգություն մ'է, զոր մեծ հաջողակությամբ հեղինակած է մեր ուսումնական բարեկամն՝ պ. Քովմաս Թերզյան...

Անցյալ տարի իտալական թատրոնին մեջ ներկայացուց Արևելյան թատրոնի դերասանական խումբը, և հանդիսականաց կողմին մեծ գոհունակությամբ և բուռն ծափահարությամբ ընդունվեցավ»¹։

Հայտնի է Վ. Պառնասյան—Ս. Թղլյան բանավեճն այդ ստեղծագործության կապակցությամբ։ Առաջինը գտնում էր, որ թատերգակն իր ողբերգության համար հաջող նյութ է բնորոշ ազգային պատմության էջերից և կարողացել է լավ գործ ստեղծել՝ դուրին և բնական երկխոսություններով։ Միայն թե «բաղձալի էր, որ ողբերգության մեծ կետը, երևակայությունը, ավելի եռանդուն ըլլար, ավելի վարանման մեջ թողուր զմեզ, և Լորենց քիչ մ'ավելի սիրտերնիս երկյուղով և սարսափանք լեցվեր, ու սիրուն բոցը քիչ մ'ավելի ջերմ ըլլար»²։ Չնայած այս թերություններին՝ «գործունյ ամբողջը գովության արժանի է, վասն զի առաջին անգամին թեթև պակասությունները՝ ավելի գեղեցիկ գրվածներու կարապետ կրլլան»³։

Թղլյանը, որ ժամանակի ճանաչված թատերգակներից էր, պատասխան հողվածով ընկավ ճայրահեղության մեջ։ Մերժելով Պառնասյանի բուրբ դիտողությունները՝ նա շափազանցրեց «Սանդուխտ» գրական արժանիքները։ «Ինչպես որ աղամանդ մը,—գրում է Թղլյանը,—տղմի մեջ նետվելով՝ իր հարգը երբեք չկորսնցնեք, այնպես ալ Սանդուխտ ողբերգությունն երբեք իր արժեքը պիտի չկորսնցնի։ Իր հալածիչները, նախանձորդները, թշնամիները պիտի ծաղրեն և պիտի արհամարհեն զանոնք»⁴։ Նրա կարծիքով՝ դժվար է գտնել մի այլ ողբերգություն, որ Թերզյանի այդ ստեղծագործության շափ նորանոր յմաստներ պարունակի։ Այսպիսով, «Սանդուխտը» «կատարյալ» և «անմահական» ստեղծագործություն է, իր բառերով ասած, իսկ դրա հեղինակը՝ «հանճարավոր»։

Վ. Պառնասյանը չպատասխանեց այդ հողվածին։

Անցյալ դարի 50—60-ական թվականներին, հատկապես արևմտահայ իրականության մեջ, լայն տարածում ունեին և մեծ ժողովրդականություն էին վայելում պատմահայրենասիրական ողբերգությունները։ Կյանքի կոչվելով ազգային-ազատագրական շարժման հետևանքով, դրանք էլ իրենց հերթին նպաստում էին այդ շարժման վերելքին, բորբոքում ժողովրդի հայրենասիրական զգացումները, ազգային ինքնագիտակցությունը։ Ահա թե ինչու նույնիսկ թույլ գրողների երկերը գրեթե նույնպիսի շեղումությամբ և ոգևորությամբ էին ընդունվում, ինչպես տա-

¹ «Կիլիկիա», Կ. Պոլիս, 1863, թիվ 2, էջ 40։

² «Մասիս», 1863, թիվ 591։

³ Նույն տեղում։

⁴ «Կիլիկիա», Կ. Պոլիս, 1863, թիվ 13, էջ 300—301։

զանդավոր գրողներին: Մեծանուն երգիծարան Հակոբ Պարոնյանը, տարբեր առիթներով խոսելով պատմական ողբերգությունների մասին, շեշտում էր, որ դրանց բազմության մեջ չկա մի գործ, որ հայկական ոգի ունենա և գրական փորձրիշատե արժեք: Սահմանափակ էր ողբերգությունների թեման, միայն հայ ժողովրդի պատմությունից մի երկու դրվագ՝ հիմնականում Արշակունյաց կամ Վարդանանց կյանքից: Դրանք, եվրոպական դրամատուրգների երկերի նմանողություններ չինելով, միաժամանակ տառապում էին սխեմատիզմով և միօրինակությամբ, իսկ գործող անձերը միայն անունով էին հայ՝ զուրկ հայկական նկարագրից: Խոսքը մասնավորեցնելով Քերզյանի դրամատուրգիայի վերաբերյալ՝ Պարոնյանը գրում է. «Վաստահությունը կրնանք ըսել՝ թե յուր ողբերգությանց համար իրեն տրված ջերմ ծափահարությունները խոնարհությամբ ընդունած է ի դիմաց Քոռնեյի, Շեքսպիրի և այլն, որոց տունը կը ներկայացնեն մայրաքաղաքին մեջ»⁵: Ավելին, նրա կարծիքով գրական նմանողականությունը ամենամեծ շահերի էր հասնում հենց Քերզյանի թատերգություններում: Բայց և այնպես, Պարոնյանը որոշ «մեղմացուցիչ հանգամանք» է նշում Քերզյան դրամատուրգի համար. ժամանակն էր պահանջում, որ նա գրեր նման երկեր: «Ի՞նչ կուզեիք որ ըներ,—հարցնում է Պարոնյանը,—երբ խեղճին վրա հարձակած էին և ողբերգություն կուզեին»⁶: Ինչպես նկատվել է գրականագետների կողմից (Ս. Սարինյան, Վ. Քերզրաշյան և ուրիշներ), այդ շրջանում ստեղծված պատմական ողբերգությունները, որոնց թվում և Քերզյանի գործերը, կատարեցին իրենց պատմական դերը, այսինքն՝ նպաստեցին հայոց ազգային-ազատագրական շարժման վերելքին: Մյուս կողմից՝ չպետք է մոռանալ, որ նշված ժամանակաշրջանում հայ թատրոնն ու դրամատուրգիան դեռևս առաջին քայլերն էին անում, և Պեշիկթաշյանը, Հեթմյանը, Խերզյանը և մյուս դրամատուրգներն ու թատերական գործիչներն ազգային թատրոն և ինքնուրույն դրամատուրգիա էին ստեղծում համարյա ոչնչից: Այդ է պատճառը, որ նմանողությունը մեծ տեղ էր գրավում նրանց երկերում:

1880 թ. Քերզյանի խմբագրությամբ հրատարակվում է «Սաղկաքաղ արհեստից և գիտությունաց» շարաթական հանդեսը, որի հենց առաջին համարի լույս տեսնելու կապակցությամբ Պարոնյանը հանդես է գալիս խիստ քննադատությամբ: «Ի՞նչ հասկանա խեղճ գավառացին քո մանիշակագույն ապակիներեդ, երբ նա չերմոցի վրա դեռ գաղափար չունի: Ի՞նչ պտուղ քաղե քու պտուղ շորցնելու համար տված քարոզիդ՝ երբ նա ծառերու մշակության վրա չէ կարդացած ոչինչ. ի՞նչ պարտականություն ունի շորս հինգ տարի աշխատելու քու առողջապահական հողվածդ հասկանալու համար»⁷: Քննադատում է հանդեսի ոչ միայն լեզուն ու ոճը, որ հեռու էին բնականից և անճանաչիլ դարձած, այլև՝ հողվածների իրար հետ ոչ մի կապ չունենալը: Պարոնյանի եզրակացությունն այն է, որ նմանօրինակ հանդես հրատարակելը ոչ նրա խմբագրի, ոչ էլ աշխատակիցների՝ չովհ. Սազգյանի և Գևորգ Արղուլյանյանի գործն է, այլ նրանց, ովքեր հմտություն և փորձառություն ունեն գիտության և արհեստների բնագավառում, և որոնք դուրս էին մնացել «Սաղկաքաղից»: Պարոնյանի գիտողությունները հաշվի առնելով, ընդամենը շորս համար լույս ընծայելուց հետո, Քերզյանը զաղարեցրեց հանդեսի հրատարակությունը: Հայտնի է, թե ինչ մեծ նշանակություն էր տալիս Պարոնյանը գրական քննադատությանը, այն պետք է ճիշտ հունի մեջ դնեք գրականությունը, նպաստեք նրա զարգացմանը: Նրա կարծիքով Քերզյանը հրամարագույն անձն էր, որ կարող էր զբաղվել այդ գործով, անաշուտությամբ ցույց տար հրապարակի ողողած քերթվածներում ազգայինը և օտարը, ճշմարիտն ու կեղծը, հարազատն ու նմանողականը:

Պարոնյանի նման մի քննադատ, որն այնքան ժլատ էր իր գնահատականներում, բարձր է գնահատում Քերզյանի բանաստեղծական շնորհն ու տաղանդը, նկատելով, որ նրա տաղերն «իբրավամբ հուշակ հանած են իրենց հստակությամբ, ներդաշնակությամբ, փափկությամբ և շնորհքով»⁸:

Քերզյանի ստեղծագործության պարոնյանական գնահատականը, ճշմարտացիությունից, սկզբունքայնությունից բացի, աչքի է ընկնում գիտական օրյեկտիվությամբ, թերին, նմանո-

⁵ Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ. 10, Ե., 1979, էջ 561:

⁶ Նույն տեղում:

⁷ Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ. 4, Ե., 1965, էջ 387:

⁸ Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 561:

զականը նշելով՝ նա ցույց է տալիս նաև գեղեցիկը, արծեբազմորը և մնայունը գրողի ստեղծագործության մեջ:

Սղիա Տեմիրճիպաշյանն իր «Փիլիսոփայական բառարանում» գնահատության այսպիսի տողեր է նվիրել Քերզազանին. «Վենետիկցվոց Բենիամինն, վենետիկցվոց Նդիակիմն, կրնա ըսվի որ հարյուր բերան ունի դիցարանության համբավուն նման: Արդարև չկա վարժարան ուր շղասախոսե նա, չկա ուսրան ուր շրանախոսե... Ոչ ապաքե՞ն գրականության բրիարե (հսկա—Ս. Ի.) մ'ալ կրնա կոչվի... Արձակ թե ոտանավոր, ողբերգություն թե կատակերգություն, դուրս ցազնկերգություն թե հովվերգություն, հոգեբանություն թե ընտելություն, քերական թե արվեստ քերթողական, աղոթագիրք թե բառագիրք, ամեն նյութի վրա ամեն լեզվով և ամեն ոճով, այո՛, կարող է գրել Քերզազան ամեն օր»⁹, նրա ամենամեծ ձիրքը երևակայությունն է, որն ի հարս է գալիս քերթվաններում: 1885 թ. իր խմբագրած «Երկրագունդ» հանդեսում, տպագրելով Քերզազանի «Առ մայրն իմ» բանաստեղծությունը, Տեմիրճիպաշյանը գրում է. «Պետք չունինք մեր ընթերցողաց ներկայացնել ազգային բանաստեղծ Խովմաս Քերզազան էֆենտին... Սեծանուն քերթողն հաճած է մեզի ի հրատարակություն հղել հետագա հատվածն, հորում հայտնված երիտասարդական ավյունն ու մեծությունն տեսնել՝ ընթերցողին հոգվուն կր փոխանցին բանաստեղծին հոգին և գաչն կ'էլեկտրացնեն»¹⁰, Իսկ իր «Առ Խովմաս էֆենտի Քերզազան» ներբողում, դիմելով բանաստեղծին, նրան նոր սերնդի «մենտոր» (առաջնորդ) է անվանում¹¹:

Գրիգոր Զոհրապն իր «Մանոթ դեմքեր» շարքում, հիացմունքով խոսելով իր ուսուցիչ մասին, որը գիտողություններ է անում նրա պոեզիայի վերաբերյալ¹², նա բանավեճ է մղում նրանց դեմ, ովքեր «հատուկ իմաստասիրություն» են որոնում բանաստեղծի տաղերում, ձգտում իմանալ՝ հոռետե՞ս է, թե՞ լավատես, որպեսզի արդարացնեն նրա գոյությունը. կամ դատապարտեն: Հաճախ են մոռանում, որ պոեզիան նախ և առաջ պետք է ըմբռնել իբրև պոեզիա, իբրև գեղեցկություն: «Քերթող մը ըսի,—գրում է Զոհրապը,—հին դարերու դրուպատուր, որ կերպ ու կանցնի շարունակելով իր ճամբան, կյանքի ճամբան երկար ու ամայի. նետահար թուլունի պես, որուն փախուստի շավիղը՝ հողին վրա կաթկթող վերքի արյունեն կը գուշակվի, այդպես ալ իր հոս հոն ցիրուցան երգի, ներդաշնակության կտորներեն բանաստեղծին ուղին կը ճշդվի...»¹³, նվ բանի որ Քերզազան «ժպտիլ ալ գիտե, ժպիտ որ համակերպություն կը նշանակե, կյանքի տվյալ պայմաններուն, լավագույն իմաստասիրությունը բերած կըլլա մեզի»¹⁴:

«Մամայիդ բարև ըրե՛» նորավեպում Զոհրապը, հերոսուհուն՝ Սերվինազին ներկայացնելով, գրում է. «Սորված էինք անունը՝ գեղեցի՛կ, տարօրինա՛կ, իր դեմքին պես. կը հիշեմ որ մեր բանաստեղծական առջի փորձերուն մեջ ինքը եղած էր խոովիչ մտատիպարնիս:

Հայր Արսենի ազատ մեծաշուք տողերեն սկսած մինչև հինգ ոտքով անձուկ ոտանավորներու մեջ սիրեցի՞նք ու երգեցի՞նք զինքը, սիրահարական գրագիտություն մը որուն մեջ Քերզազանի դասերը իր անուշ նայվածքին կը խառնվին ամեն ատեն»¹⁵:

Ավելի ուշ հրապարակախոս Տիրբան Արիփարյանն էլ խոստովանել է, որ «եթե Գ. Զոհրապ գրագետ եղավ ու ես ալ հրապարակագիր, մեր նախաքայլերուն առաջնորդողը, մեր մատաղ մտքերուն ներշնչողը Քերզազան ի՛նքը եղավ»¹⁶:

Արփիար Արփիարյանը, Քերզազանին համարելով հայ նոր գրականության հիմնադիրներից մեկը, մի բեղմնավոր տաղանդ, առանձնապես բարձր է գնահատում նրա պոեզիան: Ահա թե ինչ է գրել նա բանաստեղծի քնարերգության մասին 1903 թ. «Բազմավեպում» տպագրված «Խովմաս Քերզազան» դիմանկարում, «...Իբր քնարերգակ բանաստեղծ թեթևուցած է հայ երիտասարդության սիրտը, քառորդ դար մը առաջ: Այսօր մեր աչքերուն առջև չունինք Քերզազանի ո՛ւնի մեկ ոտանավորը, գոր պաղարյունությամբ կարողով վերլուծենք ու քննադատենք կամ գնահատենք: Բայց մեր սրտերուն խորը տակավին կը հեծեծեն մեղեդիներ, որոնք երբեմն

⁹ Ե. Տեմիրճիպաշյան, Փիլիսոփայական բառարան ժողովրդական, Կ. Պոլիս, 1879, էջ 41—42:

¹⁰ «Երկրագունդ», 1885, թիվ 11, էջ 492:

¹¹ «Երկրագունդ», 1885, հուլիս, էջ 332:

¹² Քերզազանը ժամանակի ճանաչված և հմուտ ուսուցիչներից էր: Տարբեր տարիների նրան աշակերտել են Մ. Զեբազը, Ե. Տեմիրճիպաշյանը, Գ. Զոհրապը, Ա. Զոպանյանը, Օ. Զիֆթե-Սարաֆը և ուրիշներ, որոնք միշտ էլ երախտագիտությամբ են հիշել իրենց ուսուցիչին:

¹³ «Մասիս», 1892, թիվ 3971, էջ 260:

¹⁴ Կր. Զոհրապ, Երկերի ժողովածու, հ. 1, Ե., 1962, էջ 428:

¹⁵ «Մասիս», 1892, թիվ 3956, էջ 19:

¹⁶ «Լույս», 1908, թիվ 22, էջ 731:

արտմեցուցին մեզ: Քսան և Հինգեն ավելի տարիներ անցան, անկե ի վեր թախծության շատ նվազներ եկան խոսվեցին մեր հոգիները, սակայն տիկին Բեմպե Պալլանի մահվան եղբերդը միշտ կը մնա անմոռաց»¹⁷:

Խոսելով 1850—1880 թթ. գրականության մասին, Արփիարյանը նկատում է, որ այդ ժամանակաշրջանի գրական արտադրությունների մեջ առաջնակարգ տեղ էր զբաղում թատերգությունը, որի բոլոր նյութերը ազգային հին կյանքից էին առնված: Գրանք հետագայում կարգացվում էին միայն այն պատճառով, որ ժամանակի ոգին են ցույց տալիս: Սակայն այդ գործերը մոռացության են դատապարտված, քանի որ շունեն «մեծ մեզարվեստին զգացումն ու գաղափարը»¹⁸:

Բացառություն չեն կազմում նաև Քերզյանի ողբերգությունները: Արփիարյանի կարծիքով, թեև դրանք արվեստի տեսակետից ավելի բարձր էին Պեշիկթաշլյանի հեղինակություններից, սակայն անոնք եվրոպական գործերու հայացումն էին, մարդու և տեղի անուններու փոփոխությունը»¹⁹:

Արևմտահայ բանասեր Սմբատ Դավթյանը Քերզյանին նվիրված գրական ուսումնասիրության մեջ բարձր է գնահատում նրա բանաստեղծական արվեստը, նշելով, որ նա բանաստեղծ է հոգով, զգացումով և արտահայտությամբ, մի արվեստագետ, որը «մեր մեջ պիտի մնա գերազանցապես գեղապաշտ, գեղարվեստասեր պոետը, ուրիշները՝ այս տեսակետով՝ միշտ բան մը պիտի ունենան պակաս»²⁰: Ինչպես Դավթյանն է նկատում, Քերզյանը հանգի ճոխությունը չէ որ փնտրում է իր տաղերում, այլ գեղեցիկ ոգին և կարողանում է նյութը ներդաշնակ կերպով արտահայտել: Ընդհատ է, նրա ստեղծագործության լեզուն գրաբարախառն աշխարհաբարն է, բայց դա ներելի է, քանի որ «Քերզյան քաջ գիտի գրարար ոճի մը, բառի մը մեջ խտացնել ինչ որ՝ այլապես՝ երկաթն պարբերությունով մը բացատրել կարելի պիտի ըլլար: Ասոր համար է որ իր ոճը այնքան կուռ ու կրողի է»²¹, Քերզյանն ազնվական ճաշակ է դնում բառերի ընտրության մեջ, հաճախ մի բառում խտացնում մի ամբողջ պատկեր: Սակայն համաձայն չենք կարող գրականագետի այն կարծիքին, որ Քերզյանի «բոլոր քերթվածներուն մեջ չես կրնար գտնել բառ մը, որ իմաստով կամ ձևով գոհհիկ ըլլա»²²: Սա կարելի է սանել բանաստեղծի միայն լավագույն քերթվածների մասին, բայց նա ունի նաև թույլ գործեր, որոնց մեջ կան ոչ միայն ավելորդ բառեր, այլև ամբողջական հատվածներ, որոնք այնքան էլ կատարյալ չեն: Իսկ ինչ նրա պոեզիայի բովանդակության է վերաբերում, ճիշտ է նկատում Դավթյանը, որ նրանում մի այնպիսի հրապույր կա, որ միայն Քերզյանին է հատուկ: Բանաստեղծի տաղերում «խորհրդավոր ու խորունկ դաշնակություն մը, երաժշտություն մը կա՝ բառերի դաշնակութենեն գատ—կը կարծես լսել, զգալ՝ կենդանի շունչ մը, երգ մը որ կը թրթոս ու կը թրթոացնեն հոգիդ»²³: Ամեն մի երգում գտնում ենք մի ճշմարտություն, մի որոշակի իդեալ, գերազանցին ձգտող մի ոգի: Նա չի կաշկանդվում տաղաչափական կանոնների մեջ՝ քաջ գիտակցելով, որ բանաստեղծություն համար դրանք չեն կարևորը, ձևից ավելի ոգուն է նշանակություն տալիս: Այս ամենը Դավթյանին հիմք են տալիս եզրակացնելու, որ «ամենն քնքուշը, ամենն ազնվականը և շնորհային՝ ժամանակակից (իր ժամանակի—Ս. Ի.) հայ բերթոցներուն, Քերզյան միակն եղած է իբր գեղարվեստական տաղանդ որ կը սավառնի բանաստեղծության ամենն բարձր ոլորտները»²⁴, և «նորելուկները ինչ որ ալ բանն, լեզվի տեսակետով, ներշնչումի, զգացումի կողմն՝ նորերեն ոչ ոք հավասարած է Քերզյանին...»²⁵:

Ինչպես գիտենք, անցյալ դարի 80-ական թթ. վերջերից Արևմտյան Հայաստանում արգելվեցին հայերեն լեզվով ներկայացումները, որը համիդյան հայահալած քաղաքականության դրսևորումներից էր: Եվ ահա 1908 թ. օսմանյան նոր սահմանադրության հնչակումից հետո նո-

¹⁷ Ա. Արփիարյան, Պատմություն ԺԹ դարու թուրքիո հայոց գրականության, Կահիրե, 1943, էջ 225: Հիշյալ եղբերդը Քերզյանի տաղերից է, որի վերնագիրն է՝ «Վշտահար ամուսինն ազղամեռիկն նագելի»:

¹⁸ Նույն տեղում, էջ 33:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ «Արևելյան մամուլ», 1903, թիվ 22, էջ 510:

²¹ Նույն տեղում:

²² Նույն տեղում:

²³ Նույն տեղում:

²⁴ «Ճաշակ նոր գրականության», Բ հատոր, Կ. Պոլիս, 1910, էջ 329:

²⁵ Թ. Քերզյան, Բանաստեղծությունաց ամբողջական հավաքածո, հ. 2, Վենետիկ, 1929, էջ 445:

րից բեմական կյանք են ստանում հայկական դրամատիկական ստեղծագործությունները, և առաջինը Ք. Թերզյանի «Սանդուխտն» էր, որը քառորդ դար ընդմիջումից հետո բեմ հանեց մեծանուն Վահրամ Փափազյանը: Այդ ներկայացման առթիվ «Բյուզանդիոն» օրաթերթի անստորագիր մի հոդվածում կարդում ենք. «Քաղկեդոնի հորինվածքն ու ներկայացման մանրամասնությունները նկատելու բծախնդրություն բնավ չկար այս զուտ ազգասիրական հանդեսին մեջ»²⁶: Հողվածի հեղինակը համառոտ ներկայացնելով «Սանդուխտի» բովանդակությունը, սխալ է մեկնարանում Թերզյանի այդ երկի էությունը, այնտեղ պատմական հավակնություն ունեցող գործողություններ» փնտրելով: Այս հարցի քննությունը դուրս է մեր ծրագրից:

1909 թ. Թերզյանի մահվան կապակցությամբ «Արևելյան մամուլը» գրեց. «Հայ բանահյուսության և գրականության հորիզոնն կ'անհետանա եզական դեմք մը, ծագումով կես մը օտար՝ այլ կյանքով, գաղափարով և մանավանդ զգացումով ու լեզվով հայ կարկառուն դեմք մը, որ գրական գործունեության տեսակետով բեղմնավոր կյանքի մը ալեուլթիին մեջ հրածեշտ կու տա աշխարհին և կ'դիմե դեպի հավիտենական հանգիստն: Այդ դեմքն է Թովմաս Թերզյան...»²⁷: Այդ օրերին մամուլում տպագրվեցին բազմաթիվ հոդվածներ, որոնցում գնահատվում է Թերզյանի տաղանդը և վեր էին հանվում նրա ստեղծագործություններն ինչ-ինչ կողմեր և առանձնահատկություններ: Ռ. Սամիկյանը, ցույց տալով Թերզյանի ստեղծագործության ակունքները, ցավով է նշում Ալիշանի հանճարի ցուրեքով զարգացած փայլուն սերնդի վերջին ներկայացուցչի մահը: Այդ սերունդն էր, որ հաղորդակից լինելով հունական և իտալական գրականությանն ու արվեստին, կարողացավ դասական ոգին փոխադրել հայ գրականության մեջ, և «այս հանգամանքով է, որ այդ գրական սերունդը արժանի է գրավելու պատվո տեղը հայ գրականության պատմության մեջ, իբրև ուրույն, պանծալի և ազնվական դեմքերու սերունդ»²⁸:

Այդ սերնդի ներկայացուցիչներն իրենց խոր զգացողությամբ, վեճ արտահայտություններով և բարձրաթիշ իմացական ճախրանքներով նպաստեցին հայ գրականության զարգացմանը: «Այս նպաստին էն մեծ սատարողներն առաջինը եղավ նույն ինքն Թերզյան, որ գերազանցորեն դասական միտք մը եղավ գրականության պատնեշին վրա հարատեւաբար կանգուն և հաղթական,—գրում է քննադատը և ավելացնում,—այսպես ըլլալու համար, Թերզյան ուներ մեծ տաղանդի մը, կիրթ ճաշակի մը, վեճ և լայն գաղափարներու, ազնվական զգացումներու պարզեւեճ բոլոր գնահատելի հատկությունները, բոլոր ներդաշնակ ձիրքերը»²⁹: Հաջողված է համարում նաև Թերզյանի՝ Անակրեստի տաղերի գրարար թարգմանությունը հունական բնագրից, որի մեջ ևս երևում է նրա դասականությունը: Իսկ բանաստեղծ Վահրամ Թաթուլը Թերզյանի պոեզիայի արժանիքներից մեկն էր համարում ներդաշնակության զգացումը: Ժիշտ է, նրա բանաստեղծությունը «զուրկ չէ ինչ-ինչ հոստորություններ, զուրկ չէ նաև գեղեցկութենն ու շնորհ»³⁰, նկատում է, որ Թերզյանը կրում էր որոշ ազդեցություններ, բայց նա բանաստեղծ եղավ, որի տաղանդն անժխտելի է, թեև նրա դերն ու դիրքը մեր գրականության պատմության մեջ ճշտված չեն:

Մեկտն կյուրճյանը իրավացիորեն նշում է Թերզյանի մեծ ազդեցությունը ժամանակակիցների վրա: Նրա բանաստեղծությունները, որոնք լի են գյուտերով, խորհել են տալիս ընթերցողին, որը դրանց մեջ գտնում է «ամենապատմական հայու մը սիրտ, արյունոտ իր տաղերուն մեջ՝ Տոգրի՝ խոտվահույզ հին հիշատակներով»³¹, Իսկ Օնիկ Զիֆթե-Ասարաֆն իր «վայրկենական» խորհրդածության մեջ մի քանի խոսքով այսպես է քննադատում Թերզյանին. «Ճաշակ, նրություն և շնորհ հավետ կը հորդին իրմեն, իր տեսությունեն, իր գրվածքեն, իր խոսքերեն, իր բովանդակ լեռքենն, մինչև իր է՛ն աննշմարելի մանրամասնությունները: Գերազանց գեղապաշտը մեծին, աղվորին, մաքուրին, ազնիվին նվիրված հոգիով, մտքով... Լեզվահմուտ, բանաստեղծ՝ բառին լայն առումով, դասատու, բարոյախոս, հեղինակ, և ուրիշ շատ հատկություններու հետ, սալոնի մարդ, ծայրաստիճան փափկոտ, դյուրաթեք ու նրբանկատ վարմունքով մը՝ որ համակրանքը զմայլումի կը հասցնե»³²,

Թերզյանի դերը բարձր է գնահատել նաև Արշակ Ալպոյաճյանը՝ նշելով, որ դասական գրականության ոգին նա փոխանցեց նոր սերնդին: «Թերզյանի մեջ բան մը կար մինչև վերջը նուրբ,

²⁶ «Բյուզանդիոն», 1908, թիվ 3645:

²⁷ «Արևելյան մամուլ», 1909, թիվ 8, էջ 189:

²⁸ «Շիրակ», 1909, թիվ 6, էջ 133:

²⁹ «Շիրակ», նույն տեղում:

³⁰ «Ազդակ», Կ. Պոլիս, 1909, 14/27 փետրվար:

³¹ Ք. Թերզյան, նույն տեղում, էջ 450:

³² Նույն տեղում, էջ 443:

փանկկազգած, ճկուն, ոգևորիչ և գերազանցապես սիրուն,—գրել է անվանի գրականագետը,— բան մը որ իր ակնարկին, շարժունակներուն, խառնվածքին ու նույն իսկ քայլվածքին մեջ կնշմարեիր... Իր գրականութունն ալ հաճախ հարուն համար գրված, հայուն կյանքին առնված, և հայու զգացմամբ օժիված պահած է այն, ինչ որ Քերզյան պահած էր իր իսկ անձին և եսին վրա, և այս կ'պարտեր հույն-իտալական այն խմորման, որ իր ծնունդը և սնունդը կազմեցին մանկութիւնն օրերուն»³³, նա, վեհնետիկյան միջավայրում կրելով այդ ազդեցութիւնները, Ալիշանի և Բագրատունու ազդեցութեամբ կազմավորվելով, դարձավ հայ գրականութեան վարպետներից և ուսնվիրաններից մեկը:

Թովմաս Քերզյանի ստեղծագործութիւնը առավել խորը և համակողմանի ուսումնասիրութեան է ենթարկվել Արշակ Չոպանյանի կողմից: Նա էր, որ հանձն լառով Քերզյանի բանաստեղծութիւնների ժողովածուի հրատարակութեան գործը, դրա համար կատարելով հիրավի տիտանական աշխատանք: Չոպանյանը հավաքեց ժամանակի մամուլում սփռված Քերզյանի բոլոր բանաստեղծութիւնները, հետազոտեց նրա բոլոր ձեռագրերը: Համեմատելով նույն տաղի, հաճախ բազմաթիվ, տարբերակները՝ ընտրեց դրանցից լավագոյնները և 1929 թ. վեհնետիկում երկու ստվիտ հատրով, իր առաջարկով և ծանոթագրութիւններով հրատարակեց Քերզյանի «Բանաստեղծութեանց ամբողջական հավաքածոն»: Անշուշտ այդ աշխատանքն էլ նպաստեց, որ նա ավելի խորն ըմբռնի Քերզյանի պոեզիան, հասու լինի նրա բանաստեղծական աշխարհի նրբութիւններին և գաղտնիքներին: Այդ պատճառով էլ նրա քննադատութիւնը տարբերվում է բոլոր մյուսներից, որոնք միայն մասնավոր գեղեցկութիւններ և մասնավոր թերութիւններ էին տեսնում գրողի ստեղծագործութեան մեջ: Չոպանյանն իր տեսակետներն արտահայտել է ժողովածուի առաջարկում, բայց մինչ այդ էլ տարբեր առիթներով բազմիցս անդրադարձել է «Քերզյանին» միշտ էլ հիացմունքով խոսելով նրա մասին և յարձր գնահատելով նրա արվեստը: Այսպէս, դեռևս 1899 թ. իր խմբագրած «Անահիտ» ամսագրում այն կարծիքն է հայտնում, որ արևմտահայ գրականութեան ուրիշ էջերի հետ նաև Քերզյանի «մեկ քանի բանաստեղծութիւնները կրնան նույնութեամբ թարգմանվիլ եվրոպական ոեէ լեզվի ու ընդունելութիւն գտնել ամենն զժվարահաճ քննադատներուն քով»³⁴, Ինչպէս ամբողջ արևմտահայ գրականութեան, այնպէս էլ մասնավորապէս պոեզիայի մասին, Չոպանյանն այն համոզմունքն ունի, որ մեր գրականութեան հենց այդ ճյուղն է մշակել, հղկել և կատարելագործել գրական ստեղծագործութեան ձևը: Նա բարձր է գնահատում նաև Քերզյանի դերն այդ գործում: Երիշտ է, Քերզյանը դասականորեն նվազ կատարյալ է, քան Պեշիկթաշլյանը, ավելի նվազ շղուտ, քան Դուրյանը, բայց ավելի բազմազան է, գաղափարով լեցուն, ավելի հրապուրիչ: Նրա տաղերն անշափ երածշտական են և նրբացած, գրված են «արվեստագետ» ձևով: Ամբողջութեան մեջ, ինչպէս իրավացիորեն նկատում է քննադատը, Քերզյանի պոեզիային հատուկ են լավատեսութիւնը, գեղասիրութեան ձգտումը և նրբին երածշտականութիւնը: Բանաստեղծն ավելի շատ ընդհանրապէս մարդուն է նկատի ունեցել, քան հային մասնավորապէս, հավակնել է արտահայտել տիեզերական կյանքն ու ամբողջ մարդկութեան ճակատագիրը, ինչպէս բոլոր ողմանտիկ մեծ գրողները: Հետևաբար, Քերզյանի պոեզիան համամարդկային բովանդակութիւն ունի և կհուզի նաև ուրիշ ազգերի մարդկանց, բայց նրա ջուրաբանչլուր էրում կզգացվի հայի խառնվածքը, որը ծնվել և ապրել է Պոլսում, կազմավորվել վեհնետիկյան միջավայրում և Մխիթարյանների շնչի ներքո:

Առհասարակ, Չոպանյանի մտնեցումը Քերզյանի պոեզիային պաշտամունքի էր հասնում: Նրա որոշ բանաստեղծութիւններ, Ալիշանի, Պեշիկթաշլյանի և Դուրյանի մի քանի բանաստեղծութիւնների հետ, «հայերեն լեզվով գոյութիւն ունեցող ամենն գունազեղ ու ներդաշնակ քերթվածներն են»³⁵:

Հետաքրքիր զարգացում է ունեցել Չոպանյանի վերաբերմունքը Քերզյանի դրամատուրգիայի նկատմամբ: Սկզբում գտնում էր, որ Պեշիկթաշլյանի թատերախաղերի նման Քերզյանի գործերն էլ թույլ են, առ թե հետևողութիւն ըլլալուն համար, այլ որովհետև հեղինակները, որ զմալելի քնարերգական էին, թատերական ուժեղ տաղանդ մը չունեին, և իրենց արտադրած խաղերը զուրկ են կյանքի»³⁶, Բայց ուսումնասիրութիւնները նրան բերում են այլ հետևութեան: Համեմատելով հայ առաջին թատերագիրների տաղանդը, Չոպանյանն առանձնացնում է Քերզյանին և բարձր գասում բոլորից, նույնիսկ Պեշիկթաշլյանից և Դուրյանից: Նա բոլորից ավելի ձիրք ունի թատերագրութեան համար, այդ արվեստը լավ ուսումնասիրած էր. իր խաղերը

³³ «Քրուզանդիոն», 1909, թիվ 3764:

³⁴ «Անահիտ», 1899, թիվ 11, էջ 325:

³⁵ Ա. Չոպանյան, Մ. Պեշիկթաշլյանի կյանքն ու գործը, Փարիզ, 1907, էջ 238:

³⁶ «Անահիտ», 1907, թիվ 1—2, էջ 40:

ճարտարոն են հյուսված են. անոնց մեջ կան մերթ սիրուն տեսարաններ, քնարերգական գեղեցիկ կտորներ. բայց նմանողությունը շափազանցության հասուցած է հաճախ. եվրոպական հրաշակերտներու ամբողջ տեսարաններ նույնությամբ փոխադրած է իր թատերգությանց մեջ»³⁷: Եվ չնայած այն բանին, որ Թերզյանը հայ հասարակությանը հայտնի է ավելի իրեն թատերագիր, այնուամենայնիվ, նրա փառքը իր քերթվածների մեջ է, որոնք հայ գրականության «գեթազուն հարստություններից» են³⁸:

Ճշմարտությունը պահանջում է ասել, որ եղել են նաև տրամագծորեն հակադիր կարծիքներ, այսինքն՝ փորձեր են արվել ժխտելու Թերզյանի գրական վաստակը, նրա ամբողջ ստեղծագործությունը անիմաստ նմանողություն համարելու Ալլապիսի փորձերից մեկը կատարել է Արտաշես Հարությունյանը, որն իր «Գրական դիմաստվերների» շարքում անդրադարձել է նաև Թերզյանին, գտնելով որ վերջինս չունի «զուգահեռական կշիռը» այն համբավին, որ նրա շուրջը բարձրացրել են համակրողները, առաջին հերթին՝ Թերզյանի ավագ և կրտսեր աշակերտները: Բայց պետք է նկատել, որ միայն Թերզյանի աշակերտները չէին, որ բարձր էին գնահատում նրա ստեղծագործությունը: Հարությունյանի հողվածում դժվար չէ նկատել որոշ հակասականություն: Նախ նշում է, որ բանաստեղծի պոեզիայում «միշտ լուրջ իմաստ մը կամ գիտակից հուզմունքի թրթռում մը կը սարսռայ, ու երբեք գրչի հարևանցի ու զրոսասեր շարժուձևի մը արտադրությամբ, արկածի քմահաճույթին ձգված»³⁹: Բայց թեև «ճաշակի ու ճանաչողության վարժությունները շնն պակսիր անոր», թեև նրա բանաստեղծությունների խորքում գտնում ենք գրական լայն ու ճկուն հասկացողություն, այնուամենայնիվ, քննադատի կարծիքով, Թերզյանը «երբեք լավ բանաստեղծ մը չէ», քանի որ չունի շեշտված բանաստեղծական անհատականություն և ամբողջովին օտար տպավորություններով է կազմված⁴⁰: Հարությունյանը գտնում էր, որ նա մենեին ինքնատիպություն չունի, մի բան, որ առանձնապես շեշտում էին Զուպանյանը և մյուսները, և անիմաստ է «որևէ իսկատպություն փնտրել իր բանաստեղծության մեջ»⁴¹: Ինչպես հողվածի սկզբում է խոստովանում, Թերզյանից «չառ աղվոր բան մը» չի կարդացել, և ինչպե՞ս կարող էր կարդալ, երբ նրա բանաստեղծությունների ամբողջությունը չկար հրապարակի վրա այդ ժամանակ: Սակայն կարծում ենք, որ «ռուսահայ մեծ բանաստեղծ Գամառ-Քաթիպալին» համակրելը հիմք չի տալիս ժխտելու Թերզյանի բանաստեղծական շնորհը: Քննադատը ժխտում է նաև տաղերի երաժշտականությունը, իսկ ստեղծագործության լեզուն գրարարի և աշխարհաբարի «սոգեղ խառնուրդ» է անվանում: Սխալ կլիներ կարծել թե Թերզյանը լավ ըգիտեր աշխարհաբարը և այդ պատճառով էր գրում նման լեզվով: Ապացույց, նրա «Թերականություն աշխարհաբար լեզվի» դպրոցական դասագիրքը, որը բազմիցս վերահրատարակվել է, և մեկից ավելի սերունդներ նոր գրական լեզուն սովորել են այդ դասագրքով: Երևույթը մի քիչ ավելի բարդ է, Թերզյանը սկզբում գրում էր մաքուր գրարարով, հետո անցավ աշխարհաբարի, առանց երբեք հրաժարվելու գրարարյան բառերով և դարձվածներով իր բանաստեղծությունը զարդարելուց: Ինորոշ է, որ Մ. Զեբազն էլ գրապայթարի շրջանում աշխարհաբարի քերականության վերաբերյալ առաջարկում էր «ընտրողարար»՝ օգտվել և՛ գրարարից, և աշխարհաբարից⁴²: Ու թեև աշխարհաբարը վաղուց էր հաղթանակ տոնել, բայց գրապայթարը դեռևս ավարտված չէր: Նույնիսկ Թեոդիկի 1909 թ. «Ամենուն տարեցույցում» դրված էր այդ հիսունամյա վաղեմություն ունեցող հարցը՝ «Ճրկուքն ո՞րը»:

³⁷ Ա. Զուպանյան, ԵՂՎ. աշխ., էջ 115:

³⁸ Այս տեսակետը Զուպանյանը պաշտպանում է նաև 1929 թ., Թերզյանի ժողովածուի առաջաբանում:

³⁹ «Արևելյան մամուլ», 1903, թիվ 35, էջ 828:

⁴⁰ Նույն տեղում:

⁴¹ «Արևելյան մամուլ», նույն տեղում:

⁴² Տե՛ս Մ. Զեբազ, Գրական փորձեր, Կ. Պոլիս, 1874, Առաջաբան:

Ք. Քերզյանի մասին շատերն են գրել, ինչպես նրա կենդանության օրոք, այնպես էլ մահից հետո: Հասկանալի է, որ դրանց բոլորին անգրադատնալ չենք կարող և դրա անհրաժեշտութունն էլ չկա: Իսկ ինչ վերահիշյալ կարծիքներին կամ տեսակետներին է վերաբերում, այսպիսի դրանց մի մասը կարելի է ընդունել կամ մերժել, բայց չի կարելի շնկատել ուսումնասիրողների ձգտումը՝ հասկանալ գրողին, գտնել այն նորը, որ բերում էր իր ստեղծագործությամբ:

С. А. ИСКАНДАРЯН—Товмас Терзян в оценке повременной критики.—Значителен вклад Товмаса Терзяна в создание новой армянской поэзии и оригинальной национальной драматургии. Своими стихотворениями и пьесами он завоевал горячие симпатии армянского читателя и литературной интеллигенции. Автор статьи, рассматривая высказывания известных писателей и критиков времени—А. Пароняна, Е. Темирчипашяна, Г. Зограпа, А. Чопаняна и других — о Т. Терзяне, отмечает, что они независимо от своих позиций, приемлющих или неприемлющих оценок проявляют единое стремление—понять писателя, оценить то новое, что внес Терзян в армянскую литературу своим творчеством.